և բառնալոյ զպատկերս և զկանթեղս զոր եդիք 'ի Ս. Յա-
րութիւն. եւ Բդեշխն հաճեալ երեւի կատարել զայնս.
եթէ չկատարեսցէ զգործն ընդ ձեզ սիրով. թշնամին ձեր
հզօր և 'ի տուրս առատ։ Ապա առեալ զհրէայն մօրն առ
Գեահեայն, զի թերեւս շահեսցին ինչ, այլ լուան զան-
կարելին և զխստութիւն Բդեշխին, եւ յերկարել բանից
սկսաւ նախատանօք թշնամանել զնոսա։ Եւ նոցա յանձն
առեալ զամենայն ինչ ասեն, որո՞յ լրաւամբ զայսքան քր-
սակս պահանջէք, միթէ մեզս ի՞նչ գործեցաք. զի խընդ-
րեցաք կատարել զգործն ըստ հրամանի Արքային։ Եւ նա
ասէ չգիտեմք զայդպիսի իրս. զի որպէս ետուք Դատա-
ւորին, Խօճաքեանին եւ այլոց, Բդեշխն եւս պահանջէ.
գուցէ զՋաջիք յետոյ, ասացաք ձեզ թէ բաց է ճանա-
պարհ Երուսաղէմի ընդէ՞ր ոչ գնայիք, ո՛հ եթէ երթա-
յիք. և 'ի կարի թախանձելն զնա Վարդապետաց, վերըս-
տին յղեաց զհրեայն առ Բդեշխն, եւ նորա եկեալ ասէ՝
բարկացաւ ինձ և քեզ, միայն 50 քսակն շնորհեալ է։ Եւ
լուեալ զայս ելին տրտմութեամբ արտաքս։ Եւ մինչ խոր-
հէին զորպէսն, եկին հրաւիրակք և առիպէին զնոսա եր-
թալ առ Բդեշխն և զգենուլ զխիլայս. Հրէայն յորդորէր
զնոսա չապականել տրտմութեամբ զերեսս իւրեանց առա-
ջի ամենեցուն, զի չէր ինչ օգուտ անտի։ Եւ իբրեւ յան-
դիման եղեն, ետ բերել զսամուրենիս և զգեցոյց Վարդա-
պետաց և Սարկաւագին, և 'ի խոնարհիլ նոցա 'ի յարգանս,
ասէ ցԳեահեայն՝ յոյժ բարկացեալ էի սոցա զի ոչ ծանեան
զիս, եւ առանց հրամանի իմոյ մարսել կարծէին զգործն
Ս. Յարութեան, սակայն այժմ ներեցի. և հանին զնոսա
արտաքս, իբրեւ հարցին ցԳեահեայն, հրամայեաց նոցա
գրել մուրհակ 450 քսակի. և 'ի պատճառել նոցա զկեղե-
քումն՝ զայլ և այլ պահանջս Գանձապետին յԵրուսաղէմ
'ի Պատրիարքէն. գրել առ նա գիր յանձնարարական, ա-
սէ՝ դուք զգործ տեղւոյս հոգացէք և ոչ զԵրուսաղէմին,
մեկնեցան 'ի վանս։ Յետ երկուց աւուրց կնքեցին զմուր-
հակն պարտուց Դիոնէսիոս և Սարգիս Վարդապետք եւ
Յովհաննէս Սարկաւագ (1813. 'ի 4 Օգոստոսի)։ Եդին
պայման հատուցանել զայն զկնի 41 աւուրց, որպէս արա-
րեալ էին Յոյնք. եւ առին զերկուս հրամանագիրս մին